«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Երաժշտության ունկնդրումը որպես երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացման միջոց

Երաժշ. Դաստիարակ՝ Էմմա Սեդրակյան

Վայոց ձոր Արենի համայնք գ. Ագարակաձոր

Մանկապարտեզ՝ «Արևիկ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……………………………………………………………………..............……………….3
ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄՈՏ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԱԺՇՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
1.1 Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները……………………………………………………............………………..5
1.2 Երաժշտությունը երեխայի կյանքում………………………………………...........…..…………6
1.3 Երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացումը………………....…......…………8
ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ………………………………...…………....……...…...11
Եզրակացություն………………………………………………...........…...………………….......…15
Գրականության ցանկ…………………………………………............………………………….16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: ցանկացած ժամանակաշրջանում նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է երաժշտությունը: Երաժշտության հետ շփումը երեխաների գեղագիտական դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է: Երաժշտությունը ազդում է նրանց զգացմունքների, հույզերի, ձևավորում շրջապատող իրականության վերաբերյալ համապատասխան վերաբերմունք:

Երաժշտական արվեստն արտացոլելով կյանքը՝ հաստատուն է դարձնում մարդու բարոյական կերպարը և բացահայտում հոգևոր աշխարհի հարստությունը: Այս գործունությունը ազդում է նաև փոքրիկների վրա: Ազդելով հուզաշխարհի մղում է նրանց դեպի բարին, դրականը, կատարյալը: Երեխան արվեստի ճյուղերից առաջինը արձագանքում է երաժշտությանը:

Թեմայի նպատակը՝ Ուսումնասիրել և ցույց տալ նախադպրոցականի զարգացման և երաժշտագեղագիտական դաստիարակության գործում երաժշտության դերը:

Ա.Խաչատրյանը ասել է «Երաժշտությունը միշտ ազնվացրել է մարդուն.մաքրել նրան հոգեպես, ծնել վսեմ զգացմունքներ, կոչել ինքնաճանաչման և ինքնակատարելա-գործման»: Իրոք, երաժշտությունը կյանքի է կոչում դեռևս չգիտակցված ընկալումներ և զգացումներ, մաքրում բոլոր տեսակի մանրուքներից, ամրապնդում մարդու արժանապատվությունը,հավատը՝ ներքին ուժերի և իր իսկ կոչման նկատմամբ:

Անվանի կոմպոզիտորներ Կոմիտասը, Ա. Մանուկյանը, Դ. Ղազարյանը, Գալիկյանը, Գ. Չթչյանը, Է. Միհրանյանը, Ա. Լուսինյանը և ուրիշներ, երեխաների համար գրել են տարբեր ժանրի և թեմատիկայի երաժշտական ստեղծագործություններ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն հայրենական երաժշտության ոսկե ֆոնդում: Երաժշտական ստեղծագործությունների բովանդակության միջոցով ծանոթանում է իր ժողովրդի կենցաղին, աշխատանքին, սովորույթներին և պատմական հերոսներին: Դա նպաստում է հայրենասիրության դաստիարակությանը:

Երեխաները շատ արագ զգում են գեղեցիկը և ձգվում դեպի այն: Խորանալով ստեղծագործության բովանդակության մեջ՝ զգում են դրա գեղեցկությունը, ձևն ու կերպարները: Երեխաների մեջ զարգանում է հետաքրքրություն, ինչպես նաև սեր երաժշտության նկատմամբ: Երաժշտական կերպարների միջոցով նա ճանաչում է շրջապատող աշխարհի գեղեցկությունը: Գեղագիտական դաստիարակությանը խնդիրները պահանջում են համապատասխան վերաբերմունք երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ:

Հետազոտական աշխատանքի ընթացքում իրականացվել է տեսական գրականության ուսումնասիրություն, համեմատվել և համադրվել են տարբեր հեղինակների կարծիքներ, կատարվել է գործնական աշխատանք:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլղից, եզրակացությունից, գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄՈՏ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԱԺՇՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1.1 Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները

Գեղագիտական դաստիարակությունը կարևոր տեղ ունի նախադպրոցականների դաստիարակության համակարգում, այն նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանն ու զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է իմացական գործունեությունը, բացահայտում ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացումը: Ճիշտ կազմակերպված գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է երեխաների

- գեղագիտական գիտակցությունը (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողություններ, գեղեցիկի պահանջմունք և գեղագիտական ճաշակ),
- գեղագիտական, գեղարվեստական ընդունակություններն ու կարողությունները (նկաչություն, ապլիկացիա, ծեփակերտում և այլն):

Այս կարողությունները կարևոր են համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման համար: Նախադպրոցական, հատկապես ավագ նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները կարող ենք բաժանել երկու խմբի:

Առաջին խումբը նպաստում է երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը, ինչը ներառում է

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ.
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակություն.
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողություն.
- գեղեցիկը ճանաչելու պահանջմունք.
- գեղագիտական ճաշակ:

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտական-գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը:

Այս տարիքում այդպիսի խնդիրներ կարող են լինել.

1. նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորումը.
2. ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը.
3. ապլիկացիայի ուսուցումը.
4. կառուցողական (ճարտարապետա-՝շինարարական) ունակությունների և կարողությունների ձևավորումը.
5. երաժշտական ընդունակությունների զարգացումը, երաժշտա—ռիթմիկ կարողությունների ձևավորումը,
6. պարարվեստի տարրերի ձևավորումը,
7. դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորումը,
8. արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուր գաղափարների փոխանցումը,
9. գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորումը:

1.2 Երաժշտությունը երեխայի կյանքում

Երաժշտական արվեստի ճանաչողական մեծագույն արժեքի ընկալումը երեխաների կողմից պետք է սկսել ամենավաղ հասակից: Այս նպատակին պետք է ծառայի նախադպրոցական հաստատությունում երաժշտական դաստիարակությունը: Մանկական տպավորությունները շատ խորն են և ընդգրկուն: Արվեստի միջոցով առաջացած այդ տպավորություններն անջնջելի հետք են թողնում, ինչը հետագայում դառնում է անհատի գեղագիտական ընկալումների առանցք և դաստիարակվածության աստիճանի ցուցանիշ: Հենց այդ արդյունքին են ձգտում հասնել նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակությունն իրականացնող մանկավարժները, մասնավորապես երաժշտության դաստիարակները [3]:

Հասկանալի է, որ մանկապարտեզը խնդիր չի դնում դաստիարակելու ապագա մասնագետ-կատարողներին: Նրա նպատակն է երաժշտական արվեստի միջոցով

դաստիարակել երեխայի զգացմունքներն ու հույզերը, բնավորությունն ու կամքը: Աշխարհի ճանաչումը երաժշտագեղագիտական կերպարի միջոցով հարստացնում է երեխայի անհատականությունը, նպաստում նրա բազմակողմանի զարգացմանը և աշխարհայացքի ձևավորմանը: Երաժշտական դաստիարակության նպատակներից բխում են համապատասխան խնդիրներ.

- Զարգացնել երեխաների երաժշտականությունը:
- Վարժեցնել նրանց երգչային և երաժշտառիթմական կարողություններին և հմտություններին:
- Ձևավորել երաժշտությունն ընկալելու, զգալու և հասկանալու կարողությունը:
- Զարգացնել երեխայի գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

Բոլոր այս խնդիրները սերտորեն զուգակցվում են միմյանց հետ: Ինչպե՞ս հասկանալ երաժշտությունը: Այս արժեքավոր հատկությունը ներառում է երկու որակների համատեղումը: Այն է՝ հուզական արձագանքի և երաժշտական ստեղծագործությանը կերպարային բովանդակության առումով ապրումակցելու կարողությունը: Երաժշտականության զարգացածության արդյունքում երեխաները կարողանում են առավել նրբորեն զգալ երաժշտական կերպարները:

Անգնահատելի է երաժշտության դերն ու նշանակությունը երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման գործում: Այն անմիջական և խոր ազդեցություն է ունենում մարդու վրա դեռ վաղ մանկության տարիներից և մեծ տեղ է զբաղեցնում նրա ընդհանուր մշակութային զարգացման գործում: Երաժշտությունն ուղեկցում է մարդուն ամբողջ կյանքի ընթացքում:

Երաժշտության միջոցով զարգանում են երեխաների շարժողական հմտությունները: Երաժշտական մատնախաղերը երեխային հնարավորություն են տալիս շարժելու մատներից յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ ի պատասխան որոշակի երգի, հետևաբար հղկում են աչքերի ու ձեռքերի կոորդինացիան: Պարզունակ ինքնաշեն գործիքները զարգացնում են նուրբ շարժողական հմտությունները, ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ նվագելու ընթացքում: Ինքնաբուխ պարերն ու երաժշտությանը համահունչ շարժումները ևս խթանում են շարժողական կոորդինացիան: Թեև երեխաների հորինած պարային շարժումները մեծապես

նպաստում են նրանց զարգացմանը, տեղին է նաև ժողովրդական պարերի մի քանի հասարակ շարժումներ սովորեցնել նրանց խմբային ներկայացումների համար:

Երաժշտական դաստիարակությունը երեխայի անձի զարգացումն է՝ երաժշտական արվեստի նպատակաուղղված և կազմակերպված ներգործության միջոցով, ինչպես նաև երաժշտության նկատմամբ երեխայի հետաքրքրությունների, պահանջմունքների և գեղագիտական վերաբերմունքի ձևավորումը: Համակարգված և նպատակաուղղված աշխատանքի արդյունքում երեխաները կարողանում են ունկնդրել երաժշտությունը, հիշել և ճանաչել այն, ուրախանալ, հրճվել նրանով: Նրանց մեջ զարգանում է հետաքրքրություն երաժշտության հանդեպ, որը հետագայում վերածվում է կայուն կապվածության [1]:

1.3 Երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացումը

Նախակրթարանում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային (դուուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն): Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1.Երաժշտության ունկնդրում – դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ,

2.Երգեցողություն – զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության,

տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը): Ձայնածավալը՝ դո1 (ռե1) – սի1, դո2:

3.Երաժշտառիթմիկ շարժում, պարեր, խաղեր – ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը [1]:

Նախակրթարանում երաժշտական նյութը պետք է լինի անենալավն ու փորձվածը, այն, ինչը ստեղծվել է կյանքի մեջ՝ կյանքի գույներով, խաղերով: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև խաղիկը, ասիկը: Միևնույն ժամանակ պետք է իմանանք՝ ինչպես մատուցել, որ մանկան հոգու մեջ թողնի այն հուզական երանգը, որով ստեղծվել է: Եթե փորձենք այլ ուղղությամբ տանել, կնմանվենք այն շենքին, որի հիմնաքարերը տարբեր որակներ, ամրություն, չափ ունեն: Եվ երբ կկառուցվի շենքը, կնմանվի անհասկանալի ձև ու որակ ունեցող շինության, որն օգտագործման ենթակա չի լինի:

Նախադպրոցական հաստատություններում գեղագիտական դաստիարակությունն ուղղված է գեղեցիկի և շրջապատող իրականության գեղագիտական ընկալմանն ու ստեղծագործական ունակությունների ձևավորմանը: Այս տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական գործունեության կազմակերպման հարցում գլխավոր դերը պատկանում է շրջապատող աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունքի ձևավորմանը:

Երեխայի գեղարվեստական գործունեության մեջ էական տեղ ունի երաժշտական դաստիարակությունը: Այս տարիքում երաժշտական մշակույթի ձևավորման կարևորությունը պայմանավորված է երաժշտության դրական ազդեցությամբ: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում երաժշտական մշակույթի ձևավորման համար կարևոր տեղ են գրավում երգերը, խաղերգերը, երաժշտական խաղերը, պարերգերը: Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով: Մանկապարտեզում ծիսական, ազգային երգերը,

խաղերգերը, ասերգերը, պարերգերը, հաշվերգերը երաժշտական կրթության մեջ արդյունավետ նյութեր են, որոնք մեծապես նպաստում են երեխայի ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորմանը: Երաժշտական խաղերը երեխաների բազմակողմանի զարգացման միջոցներից են: Դրանց շնորհիվ է, որ նրանք կարողանում են առավել հուզականորեն ընկալել երաժշտությունը, հղկվում-բյուրեղանում են նրանց հույզերը, զարգանում են մտածողությունն ու երևակայությունը, ամրանում է կամքը: Երաժշտությունը գեղագիտական և հոգևոր մեծ աղբյուր է երեխայի համար:

Երաժշտական տպավորությունները հարստացնում են երեխայի հույզերը և զարգացնում շրջապատող աշխարհի գեղարվեստական ընկալման կարողությունը: Ուրախ, աշխույժ, հերոսական երաժշտությունը ոգևորում է նրան, բարձրացնում տրամադրությունը, «աշխատունակությունը»: Հանգիստ, քնարական երաժշտությունը թուլացնում է լարվածությունը, հանգստացնում և խաղաղեցնում մարդուն: Հաշվի առնելով երաժշտության մեծ ազդեցությունը երեխայի զգացմունքների վրա, հարկավոր է այն մոտեցնել նրա աշխարհընկալմանը, և ուսուցանել այնպիսի ստեղծագործություններ, որոնք կնկարագրեն և կբացահայտեն շրջակա աշխարհը: Հայտնի է, որ բնությունը և մարդկային ապրումներն են երաժշտական ոգեշնչման աղբյուր: Մտավոր և ֆիզիկական զարգացման ներդաշնակությունը, ինչպես նաև գեղագիտական վերաբերմունքը կյանքի երևույթների և արվեստի նկատմամբ, երեխայի՝ որպես անհատի ձևավորման անհրաժեշտ նախադրյալներ են [1]:

Երեխաներին գեղեցիկի աշխարհին հաղորդակից դարձնելու առավել նպաստավոր տարիքը նախադպրոցականն է: Շփումը երաժշտության հետ գեղագիտական դաստիարակության ամենակարևոր մասն է, քանզի երաժշտությունն ազդում է երեխայի զգացմունքների և շրջակա աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքի վրա: Այդ պատճառով էլ առավել կարևոր է երաժշտության դաստիարակի բազմակողմանի պատրաստվածությունը, մասնագիտական վարպետությունն ու փորձը, գիտելիքների ու կարողությունների ճիշտ կիրառումը երեխաների գեղագիտական դաստիարակության գործընթացում [4]:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Միջին խումբ

Ինտենգրված պարապմունք

Թեմա՝ «Բարի գալուստ աշուն»

(Երաժշտություն, կերպարվեստ, խոսքի զարգացում)

Անհատականությունը զպրգանում է ծնունդից մինչև մահ:

Անհատականությունը զարգանում է կյանքի հաջորդական փուլերում:

Կյանքի փուլերը, որպես անհատականության զարգացման փուլեր, բոլորի մոտ նույնն են:

Մարդկային զարգացման ութ փուլ կա.

Անցումը մի փուլից մյուսին անհատականության ճգնաժամ է:

Էրիկ Էրիկսոն

Այստեղ նույնպես կարևորվում է երաժշտության դաստիարակի և դաստիարակի սերտ կապը: Երգերի օգտագործումը մյուս պարապմունքներին և գործունեության այլ ձևերի ժամանակ օգնում է դաստիարակել երեխայի գեղագիտական ճաշակը: Մեծ է դաստիարակի դերը մանկապարտեզի առօրյայում՝ երգերի, պարերի և խաղերի ներդրման ուղղությամբ:

Անհրաժեշտ է, որ դաստիարակը ստեղծի համապատասխան միջավայր և կիրառի երաժշտական նյութն իր աշխատանքում:

Պարապմունքի նպատակները՝

- Պարզել երեխաների պատկերացումները նվագարանների՝ մետաղաֆոն, եռանկյուն, դափ և նրանց հնչողության բնույթի մասին,
- Նպաստել երեխաների նվագարաններով նվագելու կարողությունները,
- Զարգացնել երաժշտական լսողությունը, ռիթմը համեմատել երաժշտական գործիքները երկրաչափական պատկերների հետ,
- Օգտագործել երաժշտական գործիքները պարի և խաղերի ժամանակ,
- Զարգացնել երգչային ունակությունները,
- Դաստիարակել բարյացակամ վերաբերմունք շրջապատի հանդեպ,

- Հաճելի պահեր, ստեղծելու ցանկություն:

Պարապմունքի ընթացքը՝

Երաժշտության դաստիարակ:

- Բարև ձեզ երեխաներ, ի՞նչ հյուրեր ունենք, եկեք ուրախ դիմավորենք և ուրախ դիմավորենք նրանց: Տեսնում եմ ժպիտները և փայլը ձեր աչքերի:

Երեխաները և խմբի դաստիարակը քայլելով նկատում են գետնի ընկած գույնզգույն տերևներ: Դաստիարակը ասում է.

- Երեխանե՛ր, աշունն է մեզ մոտ եկել ու մոլորվել: Եկեք ճանապարհ պատրաստենք իր համար:

Դաստիարակը ճանապարհ գծում է կավիճով: Երեխաներն աշնան տերևներով են լցնում այն: Տերևներ են ունենում նաև պատրաստված պարապմունքի ժամանակ:

- Բերե՛ք նաև մեր պատրաստած տերևներով ճանապարհ բացենք մեր սիրելի աշնան համար:

Երաժշտության դաստիարակը զարդարված ծառի վրա հանկարծ հայտնաբերում է մի գեղեցիկ փաթեթ, բացում է այն և կրդում:

- Երեխաներ՛, աշունը մեզ նամակ է ուղարկել. «Սիրելի՛ երեխաներ, ես ցանկանում եմ հյուր գալ ձեզ իմ ընկերների հետ միասին: Ինձ ընդունե՞ք հյուր»:

Դաստիարակը հարցնում է երեխաներին.

- Ցանկանու՞մ եք, որ աշունը հյուր գա մեզ:

Երեխաները պատասխանում են.

- Այո:

- Եկեք շարունակենք նամակը կարդալ. «Ես զբոսնեցի դահլիճում և տերևները փռեցի հատակին: Պարենք միասին, թող քամին պտտեցնի տերևները»: Երեխաներ՛, պարենք տերևներով: Ինչպե՞ս են պարում քամու տակ տերևները:

Երեխաները պատասխանում են.

- Նուրբ, թեթև, ուրախ:

- Այո՛, ինչպիսի՞ երաժշտության տակ կպարեն տերևները:

Նվագում է Վալս: Երեխաները պարում են պար ինպրովիզացի:

Երաժշտության դաս:

- Ի՞նչ գեղեցիկ տերևաթափ էր: Երեխանե՛ր, իսկ ինչպիսի՞ն է լինում աշունը:

Երեխաները պատասխանում են._____

- Ճի՛շտ է, երեխաներ: Երբ այն տխուր է տերևները դեղնում են, երբ ուրախ է՝ կարմրում են:

Դաստիարակը հարցնում է.

- Ո՞ր տերևն է տխուր, ո՞ր տերևն է ուրախ:

Երեխաները պատասխանում են._____

Երաժշտության դաստիարակը ասում է.

- Այժմ մենք ունկնդրելու ենք Բեթհովենի «Ուրախ - տխուր» ստեղծագործությունը: Կարո՞ղ եք օգնել տարբերենք, թե որն է ուրախ, որն է տխուր: Ո՞ր երաժշտության տակ կարող են պարել տերևները:

Երեխաները դաստիարակների հետ ուրախ երաժշտության տակ պարում են կարմիր տերևներով, իսկ տխուր երաժշտության տակ՝ դեղին տերևներով:

- Աշունը լինում է ուրախ և տխուր: Անձրևի ժամանակ այն ամպամած է, թաց, ցուրտ և տխուր, իսկ արևոտ եղանակին տաք է, բազմագույն և ուրախ: Երեխանե՛ր, կարո՞ղ եք ասել, թե ինչպես են մարդիկ և կենդանիները դիմավորում աշնանը:

Երեխաները պատասխանում են_____

- Աշունը մեզ համար հանելուկներ է պատրաստել: Փորձենք գուշակել:

Դաստիարակը կարդում է հանելուկները:

1. Եռաչափ և եռակողմ եմ
   Եվ պատկեր եմ երկրաչափական
   Եվ հարվածային նվագարան:
   (Եռանկյունի)
2. Ունեմ հնչյունի բարձրություն,
   Նվագարան եմ զրնգուն:
   Դե փայտիկս ճիշտ բռնիր
   Եվ թիթեղիս հարվածիր:
   (Մետաղաֆոն)
3. Ես քեզ կոգնեմ ծափ զարկես,

Հատուկ, ռիթմիկ նվագես:

Նվագախմբի սրտի զարդն եմ,

Դե գուշակեք ես ինչն եմ:

(Դափ)

Երեխաները երգում և նվագում են «Բարև տերև» ստեղծագործությունը:

Խոսք Մ. Սահակյանի

Եր. Ա. Մանդակունյանի

Երգից հետո քննարկում են, թե ինչից են պատրաստված նվագարանները:

- Եկեք շարունակենք կարդալ աշնան նամակը. «Երեխանե՛ր, ես գիտեմ, որ դուք լավ երգում ու պարում եք, արտասանում և բեմադրություններ խաղում: Սակայն ես չգիտեմ ձեզ մոտ գալու ճանապարհը»: Եկեք կանչենք աշնանը:

Երեխաները երգում են «Ամռան շոգեր անցեք» երգը և տերևներով ցույց տալիս ճանապարհը՝ աշնանային տերևներով զադարելով, գծում ճանապարհը: Երաժշտության դաստիարակը հարցնում է.

- Ձեզ դուր եկա՞վ պարապմունքը:

- Այո՛:

- Դե եկեք ներս հրավիրենք «Աշնանը»:

«Հեյ Աշուն» երգի ժամանակ «Աշունը» ներս է մտնում: Բոլորը միասին պարում են երաժշտության տակ ազատ և ուրախ:

Վերջում երեխաները մեծ ոգևորությամբ, ծափողջյուններով ավարտում են իրենց ելույթը:

Հավելեմ նաև, որ սույն ցուցադրական դասին ներկա են եղել նաև նախադպրոցական հաստատության տնօրենն ու դաստիարակի օգնականը: Վերջիններիս կարծիքով դասն արդյունավետ էր այնքանով, որ բոլոր սաները ցուցաբերում էին ակտիվ մասնակցություն, դրսևորում նախաձեռնողականություն և հնարավորին չափ ինքնուրույնություն: Տնօրենը նաև ընդգծեց, որ բավականին լավ արդյունք է, որ նկատվում էր սաների համաչափ մասնակցություն, որևէ երեխա պասիվ ու ստվերված չէր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, պետք է նշել, որ երաժշտական դաստիարակությունը գեղագիտական դաստիարակության բաղադրամասն է, որը նպաստում է երաժշտական ճաշակի զարգացմանը, մշակույթի այդ բնագավառի նկատմամբ հետաքրքրության ու սիրո առաջացմանը, զգացմունքային դաստիարակությանը: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով: Հայոց մեջ երաժշտական կրթության ամենամեծ գիտակն ու ուսուցիչը Կոմիտասն է, որից սովորելը իրենց առաջնային պարտքն են համարում մեր երաժշտության երախտավորները, սակայն բոլորն էլ այդ օվկիանոսի մի չնչին մասն են միայն յուրացրել կամ ճանաչել: Ժողովրդական դպրոցի շնորհիվ է, որ հունգարացիները աշխարհը զարմացրին երաժշտական կրթության իրենց արդյունքներով»:

Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, հաղորդակից դարձնել և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային նվագարաններին

Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով, ուստի այստեղ երաժշտական նյութը պետք է լինի անենալավն ու փորձվածը: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև խաղիկը, ասիկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Կիրակոսյան, «Գեղագիտական դաստիարակությունը և երաժիշտ մանկավարժին ներկայացվող ժամանակակից պահանջները»
2. Կ. Ղազարյան, «Երաժշտական դաստիարակությունը ընտքնիքում»
3. Կ. Ղազարյան, Գ. Թադևոսյան, «Երաժշտություն»
4. Ա. Շահնազարյան, Երաժշտությունը մանկապարտեզում